

ՀՀ և ԵՄ երկրների միջև առևտրաշրջանառության վերլուծությունը ներկայիս աշխարհաքաղաքային պայմաններում¹

Պետրոսյան Հեղինե Գ.

*տ.գ.թ., ՀՌՀ տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության իմնասխնային հիմնասխնային հիմնասխնային ամբիոնի ավագ դասախոս (Երևան, ՀՀ)
heghineh18@gmail.com*

Սարգսյան Լուսինե Կ.

*տ.գ.թ., ՀՌՀ տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնասխնային հիմնասխնային ամբիոնի դասախոս (Երևան, ՀՀ)
sargsyan-lusine@yandex.ru*

ՀՏԳ՝ 339.5; **EDN:** RLABFA; **JEL:** F1, G12, P33, P45, Q56

DOI: 10.58587/18292437-2023.2-121

Հանգուցաբառեր՝ ՀՀ և ԵՄ միջև առևտրաշրջանառություն, ՀՀ և ՌԴ միջև առևտրաշրջանառություն, արտահանման և ներմուծման ծավալներ, արտահանման և ներմուծման կառուցվածք

Анализ товарооборота между Арменией и странами ЕС в нынешних геополитических реалиях

Петросян Егине Г.

*к.э.н., старший преподаватель кафедры экономической теории и проблем экономики переходного периода, Российско-Армянский университет (Ереван, РА)
heghineh18@gmail.com*

Саргсян Лусине К.

*к.э.н., преподаватель кафедры экономической теории и проблем экономики переходного периода, Российско-Армянский университет (Ереван, РА)
sargsyan-lusine@yandex.ru*

Аннотация. Специальная операция Российской Федерации и санкции по отношению к ней привели к резкому сокращению товарооборота со странами ЕС. Являясь основным торговым партнером, данная ситуация отразилась и на экономике Армении, в том числе на товарооборот между Арменией и странами ЕС и РФ. Целью настоящей статьи является выявление изменений в объемах, структуре и развитии торговых отношений Армении со странами ЕС и РФ в связи с геополитическими изменениями. В конце статьи представлены ряд мер по улучшению экспорта Армении.

Ключевые слова: товарооборота Армении со странами ЕС, товарооборота Армении с РФ, объемы экспорта и импорта, структура экспорта и импорта

Analysis of trade turnover between Armenia and EU countries in the current geopolitical conditions

Petrosyan Heghine G.

*PhD in Economics, Senior Lecturer in Russian-Armenian (Slavonic) University of the Department of Economic Theory and Issues of Transition Period Economies (Yerevan, RA)
heghineh18@gmail.com*

Sargsyan Lusine K.

*PhD in Economics, Lecturer in Russian-Armenian (Slavonic) University of the Department of Economic Theory and Issues of Transition Period Economies (Yerevan, RA)
sargsyan-lusine@yandex.ru*

Abstract. The special operation of RF and the sanctions against it led to a sharp reduction in trade with the EU countries. Being the main trading partner, this situation also affected the economy of Armenia, including the trade turnover between Armenia and the EU countries and RF. The purpose of this article is to identify changes in the volumes, structure and development of Armenia's trade relations with the EU countries and RF in connection with geopolitical changes. At the end of the article, a number of measures to improve Armenia's exports are presented.

¹-Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5B036):
- Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА (Научный проект № 22YR-5B036).
- This work was supported by the Science Committee of RA (Research project № 22YR-5B036).

Վերջին տասը տարվա ընթացքում ՀՀ առևտրաշրջանառությունն ընդհանուր առմամբ ունեցել է աճման տեմպեր: Բացառություններ են կազմել 2009, 2015 և 2020 թվականները, պայմանավորված համաշխարհային ճգնաժամով, Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցների հետևանքով ՌԴ տնտեսության անկմամբ [1] և COVID-19 հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամով [4]: 2015 թվականից հետո գրանցվել են կայուն աճման տեմպեր արտահանման ծավալներում, սակայն 2020 թվականին տեղի ունեցած իրադարձությունները ծանր էին ՀՀ բնակչության և բոլոր ոլորտների համար, որը բնականաբար անդրադարձ ունեցավ նաև տնտեսության, այդ թվում՝ արտահանման և ներմուծման ծավալների վրա: 2021 թվականին տնտեսությունը սկսեց կամացկամաց վերականգնվել համաճարակի և պատերազմի ազդեցությունից հետո, իսկ 2022 թվականին ՌԴ կողմից նախաձեռնած հատուկ գործողությունների հետևանքներն ունեցան անմիջական ազդեցություն նաև ՀՀ տնտեսության համար, այդ թվում՝ արտահանման և ներմուծման մասով:

2017-2022 թվականների արտահանման ուղղություններն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ 2022 թվականին տեղի են ունեցել կտրուկ փոփոխություններ ի համեմատ նախորդ տարիներին, երբ տեղեկացն անփոփոխ էր: Մասնավորապես, կտրուկ աճել է արտահանման ծավալները ԵԱՏՄ անդամ երկրներ, իսկ ավելի կոնկրետ դեպի ՌԴ (տեսակարար կշիռը կազմել է 45.0%, նախկին 27.9% փոխարեն), Արաբական Միացյալ Էմիրություններ (տեսակարար կշիռը կազմել է 10.0%, նախկին 2.5% փոխարեն): Տվյալ փոփոխությունների հետևանքով նվազել է Շվեյցարիայի (4.7%, նախկին 11.9% փոխարեն), ԵՄ երկրներ (14.4%, նախկին 21.8% փոխարեն) և Չինաստանի (6.9%, նախկին 13.0% փոխարեն) տեսակարար կշիռը: Նշենք, որ չնայած տեսակարար կշռի նվազման, արտահանման ծավալներում տեղի է ունեցել աճ: Կտրուկ փոփոխություններ են եղել նաև դեպի ՀՀ ներմուծող ապրանքների ծավալների և երկրների տեսակարար կշռում՝ ԵԱՏՄ անդամ երկրները (34.5%, որը նախորդ տարիների ցուցանիշներից գրեթե չի տարբերվում), ԵՄ երկրները (20.2%, նախորդ տարիների հետ համեմատած աճել է 1 տոկոսային կետով), Չինաստանը (8.0%, նախկին 10.3% փոխարեն) և աճել է ԱՄԷ ներմուծված ապրանքների տեսակարար կշիռը ավելի քան կրկնակի անգամ (նախկին 2.3% փոխարեն դարձել է 5.4%) (Ցուցանիշները հաշվարկվել են հեղինակի կողմից: Աղբյուր՝ [3]): Սույն հոդվածի

շրջանակներում կդիտարկենք ԵՄ երկրների հետ առևտրային շրջանառությունն ու 2022 թվականին դրանում տեղի ունեցած փոփոխությունները:

Այսպես, 2022 թվականին ՀՀ-ից դեպի ԵՄ երկրներ արտահանման ծավալի գերակշիռ մասն է կազմել արտահանումը դեպի Նիդերլանդներ (դեպի ԵՄ արտահանման ընդհանուր ծավալի 27.8%), Բուլղարիա (27.0%), Գերմանիա (13.7%) և Իտալիա (8.4%): Այս երկրները տարիներ շարունակ եղել են ՀՀ-ից ապրանքներ ընդունող երկրներ ԵՄ տարածքում և տեսակարար կշիռներում ու արտահանվող ապրանքների տեսականիում փոփոխություն տեղի չի ունեցել: 2022 թվականին արտահանումն աճել է դեպի Բելգիա շուրջ 65.0%-ով, որի արդյունքում այն դարձել է հիմնական ուղղություններից մեկը (դեպի ԵՄ արտահանման ընդհանուր ծավալի 11.1%):


Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2022 թվականին ՀՀ արտահանման ծավալները դեպի ԵՄ երկրներ ի համեմատ 2021 թվականի աճել է 17.8%, կազմելով 772751.4 հազ. ԱՄՆ դոլար: Այս ցուցանիշը բավականին բարձր է, առավել ևս հաշվի առնելով, որ 2020 թվականին այն նվազել էր 25.9%, կազմելով ընդամենը 83190 հազ. ԱՄՆ դոլար: 2021 թվականին այս ցուցանիշը կազմել էր 656084.8 հազ. ԱՄՆ դոլար: Ընդ որում, արտահանման ծավալների աճը տեղի է ունեցել բոլոր դիտարկված երկրներում, մասնավորապես, դեպի Բուլղարիա այն կազմել է 5.0%, Նիդերլանդներ՝ 12.3%, Գերմանիա՝ 36.7%, իսկ Իտալիա՝ 2.5%:

Ինչ վերաբերում է ԵՄ երկրներից ՀՀ ներմուծմանը, ապա մինչ 2022 թվականը որպես զիջավոր առևտրային գործընկեր հանդես են եկել Գերմանիան (ԵՄ երկրներից դեպի ՀՀ ընդհանուր ներմուծման ծավալների տեսակարար կշիռը կազմել է 25.9%), Իտալիան (13.9%), Ֆրանսիան (5.0%), Լեհաստանը (6.2%) և Բելգիան (5.8%): 2022 թվականին կտրուկ աճել են ներմուծման ծավալները Նիդերլանդներից (7.7%), Չեխիայից (6.5%) և Իսպանիայից (5.6%), ինչը ներկայացված է գծապատկեր 2-ում:


2022 թվականին ներմուծման ծավալները ԵՄ երկրներից դեպի ՀՀ, ի համեմատ 2021 թվականի, նույնպես կտրուկ աճել են 71.1%, կազմելով 1767983.2 հազ. ԱՄՆ դոլար 1029620.0 հազ. ԱՄՆ դոլարի փոխարեն, այսպիսով, անցնելով մինչ համաճարակային ցուցանիշները, երբ անկումը կազմել էր 21.4%, իսկ ներմուծման ծավալները՝ ընդամենը 847505.5 հազ. ԱՄՆ դոլար: Ընդ որում, ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալները դեպի ՀՀ աճել են

բոլոր դիտարկված երկրներում: Մասնավորապես, ներմուծման ծավալները Գերմանիայից դեպի ՀՀ աճել են 2.1 անգամ, Իտալիայից՝ 25.7%, Ֆրանսիայից՝ 29.8%, Լեհաստանից՝

78.7%, Բելգիայից՝ 82.9%, Նիդերլանդներից՝ 60.7%, Չեխիայից՝ 2.6 անգամ, Իսպանիայից՝ մոտ 2 անգամ:



Վճապատկեր 1. ՀՀ արտահանման ծավալների դեպի ԵՄ երկրներ 2017-2022 թթ., հազ. ԱՄՆ դոլար [2]



Վճապատկեր 2. ՀՀ ներմուծման ծավալների ԵՄ երկրներից 2017-2022 թթ., հազ. ԱՄՆ դոլար [2]

Նշենք, որ արտահանման կառուցվածքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, և չնայած դրան ինչպես նախորդ տարիներին այնպես էլ 2021-2022 թվականին, մնացել են անփոփոխ մի շարք ապրանքատեսակներ, որոնք են հանքահումքային արտադրանքը, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, ինչպես նաև ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ (Ցուցանիշները հաշվարկվել են հեղինակի կողմից: Աղբյուրներ՝ [3] և [5]) :

Ներմուծման կառուցվածքը ԵՄ երկրներից դեպի ՀՀ, ի համեմատ արտահանման կառուցվածքի, բավականին դիվերսիֆիկացված է: Այսպես, Գերմանիայից ներմուծվել են միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական սարքեր, դրանց մասերը, օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիա-

կան, չափիչ, հսկիչ, ճշգրիտ, բժշկական կամ վիրաբուժական գործիքներ և ապարատներ. դրանց մասերը և պարագաները, վերգետնյա տրանսպորտային միջոցներ՝ բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմից, էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, դրանց մասերը, Իտալիայից՝ սննդամթերք, տրիկոտաժ, վերգետնյա տրանսպորտային միջոցներ՝ բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմից, Ֆրանսիայից՝ կահույք, շինարարական հավաքովի կոնստրուկցիաներ, թռչող ապարատներ և այլն: Եվ, չնայած, որ այս ցանկը հանդիսացել է հիմնական ապրանքատեսակները քանի տարի շարունակ, 2022 թվականին այն բավականին փոփոխվել է: Դիտարկենք ներմուծման և արտահանման կառուցվածքներում փոփոխությունները ըստ ապրանքատեսակների:

2022 թվականի իրադարձությունների հետևանքով ԵՄ-ից ներմուծման մեջ տեղի ունեցած

փոփոխությունները պայմանավորված են նրանով, որ ապրանքների մի մասը հետագայում արտահանվել են ԵԱՏՄ այլ երկրներ, մասնավորապես՝ ՌԴ: Ներմուծման մեջ կրտրուկ աճել են այնպիսի ապրանքներ, ինչպիսին են.

- մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների ներմուծումը 2021 թվականի հետ համեմատած աճել է մոտ կրկնակի՝ 899164.3 հազ. ԱՄՆ դոլարից 1721708.4 հազ. ԱՄՆ դոլար,

- վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների ներմուծումը 2021 թվականի հետ համեմատած աճել է 3.2 անգամ՝ 306319.5 հազ. ԱՄՆ դոլարից 965978.4 հազ. ԱՄՆ դոլար,

- թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերի ներմուծումը 2021 թվականի հետ համեմատած աճել է 3.0 անգամ՝ 248472.5 հազ. ԱՄՆ դոլարից 690777.1 հազ. ԱՄՆ դոլար,

- փայտյա և փայտից իրերն; թուղթը և թղթից իրերը՝ շուրջ 50% և այլ:

Արտահանման մեջ կրտրուկ աճել են նաև նույն ներմուծված և ներկայացված ապրանքները, մասնավորապես.

- մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների արտահանումը 2021 թվականի հետ համեմատած աճել է ավելի քան 12 անգամ՝ 56708.3 հազ. ԱՄՆ դոլարից 695464.4 հազ. ԱՄՆ դոլար,

- վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների արտահանումը 2021 թ. հետ համեմատած աճել է 8.3 անգամ՝ 38706.5 հազ. ԱՄՆ դոլարից 116611.9 հազ. ԱՄՆ դոլար,

- թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերի արտահանումը 2021 թվականի հետ համեմատած աճել է 3,0 անգամ՝ 326341.7 հազ. ԱՄՆ դոլարից 989329.8 հազ. ԱՄՆ դոլար,

- փայտյա և փայտից իրերն; թուղթը և թղթից իրերի արտահանումը՝ շուրջ 4 անգամ և այլ:

Ամփոփելով, ակնհայտ է, որ աշխարհաքաղաքային իրադարձություններն անմիջական և կտրուկ ազդում են ՀՀ տնտեսության, այդ թվում՝ արտաքին առևտրաշրջանառության վրա: Նման արտաքին շոկերը ևս մեկ անգամ ապացուցում են ՀՀ տնտեսության բարելավման և ամրապնդման անհրաժեշտությունը: Հակառակ դեպքում կարժես թե նմանվում ենք որևէ գնդակի, երբ 2020 թվականի համավարակի և պատերազմի հետևանքով ՀՀ արտահանման ծավալները դեպի ԵՄ երկրներ ի համեմատ 2019 թվականի նվազել էր 25.9%, իսկ ԵՄ երկրներից

ներմուծումը դեպի ՀՀ՝ 21.4%, մինչդեռ 2022 թվականին ՌԴ դեմ ընդունված սակնցիաների շնորհիվ նույն ցուցանիշներն աճել են 17.8% (արտահանման ծավալները) և 71.1% (ներմուծման ծավալները): Նման կտրուկ փոփոխությունները անկառավարելի են դարձնում տնտեսությունն ու բնականաբար հարց է առաջանում թե որն է՞ ու ինչպիսի՞ն է լինելու հաջորդ շոկը:

Արտահանման և ներմուծման կառուցվածքային փոփոխությունները նույնպես պայամանավորված են եղել տարածաշրջանում տիրող իրավիճակով, հակառակ դեպքում տարիներ շարունակ ներմուծումը դեպի ՀՀ բավականին դիվերսիֆիկացրված է եղել, իսկ արտահանման մեջ գերակշռել են մի քանի ապրանքատեսակներ: Կարծում ենք, իրավիճակի փոփոխությամբ թե՛ կառուցվածքային, թե՛ ծավալային առումով ՀՀ առևտրաշրջանառության ցուցանիշները կվեարադառնան իրենց նախկին տվյալներին:

Առաջարկում ենք հետևյալ միջոցառումների իրականացումը ՀՀ առևտրաշրջանառությունը բարելավելու համար՝

- Իրականացնել վերջնական ապրանքի արտահանում, այլ ոչ թե միջանկյալի, քանի որ այս պարագայում ապրանքի գինն ավելանում է, հետևաբար աճում են նաև արտահանման ծավալները.

- Դիվերսիֆիկացնել արտահանվող ապրանքների տեսակները, մասնավորապես, տրիկոտաժե ապրանքները, շատացնել արտահանվող գյուղատնտեսական ապրանքների տեսակներն ու շուկաները:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ԱՌԲՅՄ հիմնադրամ» (2019). ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի միտումներն ու զարգացումները: Սեպտեմբերի 13, 2019թ., էջ 3:
2. ՀՀՎԿ, Արտաքին առևտրի տվյալների բազա 2017-2023, <https://www.armstat.am/am/?nid=160>
3. ՀՀՎԿ, Արտաքին տնտեսական գործունեություն, 2022 https://armstat.am/file/article/sv_12_22a_411.pdf
4. **Պետրոսյան Հ. Գ.** ՀՀ և ԵՄ երկրների միջև առևտրաշրջանառության վերլուծությունը կորոնավիրուսի ժամանակաշրջանում: Այլընտրանք գիտական հանդես, հուլիս-սպեկտեմբեր 2021. -Երևան: էջեր՝ 138-145
5. UN Comtrade Database: <https://comtrade.un.org/data>

Տճանաշարվել է՝ 14.04.2023

Րեցենզирована/Գրախոսվել է՝ 18.04.2023

Принята/Ընդունվել է՝ 20.04.2023